ՆԱԽՆԱԿԱՆ ՉԽՄԲԱԳՐՎԱԾ ՏԱՐԲԵՐԱԿ

Մարդու իրավունքների կոմիտե

Դաշնագրի 40-րդ հոդվածի համաձայն Պետությունների կողմից ներկայացված զեկույցների քննարկում

Մարդու իրավունքների կոմիտեի 105-րդ նստաշրջանի կողմից ընդունված եզրակացություններ, 2012 թ. հուլիսի 9-27-ը:

Հայաստան

1. Մարդու իրավունքների կոմիտեն քննարկել է Հայաստանի երկրորդ պարբերական զեկույցն (CCPR/C/ARM/2) իր 2903-րդ և 2904-րդ հանդիպումների ընթացքում, 2012թ-ի հուլիսի 16-ին և 17-ին: Իր 2917-րդ (CCPR/C/SR/2917) հանդիպման ժամանակ կոմիտեն ընդունել է հետևյալ եզրակացությունները 2012թ-ի հուլիսի 25-ին:

Ա. Ներածություն

2. Կոմիտեն ողջունում է Հայաստանի երկրորդ պարբերական զեկույցը՝ չնայած որոշ ուշացման և դրանում տեղ գտած տեղեկատվության: Կոմիտեն արժևորում է հաշվետվությունում ներկայացված ժամանակահատվածում Դաշնագրի դրույթները կիրառելու առնչությամբ պետության կողմից ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ պատվիրակության հետ կառուցողական երկխոսություն վերսկսելու հնարավորությունը: Կոմիտեն շնորհակալություն է հայտնում պետությանը հարցերի ցանկին (CCPR/C/ARM/Q/2) ներկայացված գրավոր պատասխանների համար (CCPR/C/ARM/Q/2/Add.1), որոնք լրացվեցին պատվիրակության բանավոր պատասխանների և լրացուցիչ գրավոր տեղեկատվության միջոցով:

Բ. Դրական կողմեր

3. Կոմիտեն ողջունում է հետևյալ փաստաթղթերի վավերացումը՝

(ա) Հաշմանդամ անձանց իրավունքների մասին կոնվենցիա, 2010 թ. սեպտեմբեր

Please recycle

(բ) Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրություն (OP-CAT), 2006 թ. սեպտեմբեր

(գ) Բռնի անհետացումներից բոլոր անձանց պաշտպանության միջազգային կոնվենցիա, 2011 թ. հունվար

(դ) Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման կոնվենցիայի կամընտիր արձանագրություն, 2006 թ. սեպտեմբեր

(ե) 2005 թ. հունիսին զինված հակամարտություններում երեխաների ներգրավման վերաբերյալ, 2005 թ. սեպտեմբերին երեխաների առևտրի, երեխաների մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի վերաբերյալ երեխաների իրավունքների կոնվենցիայի կամընտիր արձանագրություն:

Գ. Մտահոգության հիմնական թեմաներ և հանձնարարականներ

4. Կոմիտեն մտահոգված է բնակչության, պաշտոնյաների և իրավաբանների շրջանում դաշնագրի և կամընտիր արձանագրության վերաբերյալ սահմանափակ իրազեկվածության մակարդակով, որի արդյունքում դաշնագրի դրույթները սահմանափակ քանակի գործերում են վկայակոչվել և պետության դեմ որևէ անհատական բողոք չի ներկայացվել 1993 թ.-ին արձանագրության վավերացումից ի վեր (հոդված 2):

Պետությունը պետք է բաձրացնի դատավորների, իրավաբանների և պաշտոնյաների իրազեկվածությունը դաշնագրում ամրագրված իրավունքների, ազգային օրենսդրության շրջանակներում դրանց կիրառելիության և Կամընտիր արձանագրության շրջանակներում հասանելի գործընթացների մասին:

5. Կոմիտեն մտահոգված է Փարիզյան սկզբունքների հիման վրա (Գլխավոր ասամբլեայի 48/134 բանաձև) (հոդված 2) մարդու իրավունքների մոնիթորինգի, խթանման և պաշտպանության առնչությամբ ազգային իրավապաշտպան կառույցի զգոնությունը կասկածի տակ դնող տեղեկատվության պատճառով:

Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ պայմաններ, որպեսզի Օմբուդսմենի գրասենյակը, որը հանդիսանում է մարդու իրավունքների ազգային ինստիտուտ, լիովին և անկախ իրագործի իր մանդատը Փարիզյան սկզբունքներին համահունչ:

6. Կոմիտեն մտահոգված է խտրականության վերաբերյալ համապարփակ օրենսդրության բացակայությամբ: Այն նաև անհանգստացած է ռասայական և կրոնական փոքրամասնությունների նկատմամբ բռնությունների կապակցությամբ, ներառյալ քաղաքացիական ծառայողների և գործադիր իշխանության բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից, ինչպես նաև ոստիկանության և դատական իշխանության ձախողմամբ քննելու, դատական կարգով հետապնդելու և պատժելու ատելության հիմքով հանցագործությունները (հոդվածներ 2, 18, 20, 26):

Պետությունը պետք է երաշխավորի, որ խտրականության իր սահմանումը ներառում է խտրականության բոլոր ձևերը, ինչպես ամրագրված է դաշնագրում (ռասա, գույն, սեռ, լեզու, կրոն, քաղաքական կամ այլ տեսակետ, ազգային կամ սոցիալական ծագում, սեփականություն, ծննդյան կամ այլ հատկանիշ: Բացի այդ՝ պետությունը պետք է պայքարի բռնության և ռասայական ու կրոնական

ատելության խթանման դեմ, ապահովի փոքրամասնությունների համապատասխան պաշտպանությունը և երաշխավորի նման դեպքերի համապատասխան քննությունը և դատական կարգով հետապնդումը: Ավելին, կոմիտեն կոչ է անում պետությանն ապահովելու ռասայական խտրականության դեմ պայքարին ուղղված օրենքների արդյունավետ կիրարկումը և երաշխավորի դրանց նպատակների իրականացումը:

7. Կոմիտեն շարունակում է մտահոգված լինել կանանց նկատմամբ խտրականության բարձր մակարդակով, նրանց ցածր մասնակցությամբ հասարակական և քաղաքական կյանքին և նրանց ցածր մակարդակի ներկայացչությամբ հանրային և մասնավոր ոլորտների որոշում կայացնող պաշտոններում: Կոմիտեն ցավում է, որ գենդերային կարծրատիպերը դեռևս գերակշռում են հասարակության մեջ և ընտանիքում կանանց և տղամադրկանց դերերի և պարտականությունների առումով: (հոդվածներ 2, 3, 25, 26).

Պետությունը պետք է հատուկ օրենսդրություն ընդունի կանանց և տղամարդկանց հավասարության վերաբերյալ, այդպիսով պաշտոնապես ճանաչելով կանանց նկատմամբ խտրականության հատուկ բնույթը: Պետք է վերանայվի ընտրությունների համար պայքարող թեկնածուների քվոտային համակարգի արդյունավետությունը: Պետությունը պետք է նաև ուժեղացնի իր ջանքերը վերացնելու ընտանիքում և հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերի և պարտականությունների վերաբերյալ գենդերային կարծրատիպերը:

8. Կոմիտեն մտահոգված է կանանց նկատմամբ բռնության բարձր մակարդակի կայունությամբ, հատկապես ընտանեկան բռնության, և ցավում է, որ ընտանեկան բռնությունը որպես այդպիսին դեռևս առանձին քրեորեն պատժելի արարք չի դիտվում: Կոմիտեն նաև մտահոգված է ընտանեկան բռնության զոհերի համար նախատեսված ապաստանների ոչ բավարար քանակությամբ (հոդվածներ 2, 3, և 7):

Պետությունը պետք է ընդունի ընտանեկան բռնության բոլոր ձևերը քրեականացնող օրենսդրություն: Այն պետք է կենտրոնացված իրազեկության բարձրացման քարոզարշավներ իրականացնի ամբողջ երկրում՝ այս խնդիրների նկատմամբ հասարակության զգայունությունը բարձրացնելու համար: Տեղական իշխանությունները, իրավապահ և ոստիկան պաշտոնյաները, ինչպես նաև սոցիալական աշխատողները և բժշկական անձնակազմերը պետք է վերապատրաստվեն՝ ընտանեկան բռնության զոհերին բացահայտելու և ճիշտ խորհուրդ տալու համար: Պետությունը պետք է նաև երաշխավորի, որ բավարար թվով լիարժեք գործառնող ապաստաններ հասանելի են ընտանեկան բռնության զոհերին երկրի ողջ տարածքում:

9. Կոմիտեն անհանգստացած է հղիության սեռով պայմանավորված արհեստական ընդհատման թվի աճով, որն արտացոլում է գենդերային անհավասարության մշակույթը (հոդվածներ 2, 3, և 26):

Պետությունը պետք է ընդունի օրենսդրություն, որը կարգելի սեռի ընտրությունը և երևույթի մասին հավաքագրելով վստահելի տվյալներ՝ կլուծի պրենատալ շրջանում սեռի ընտրության արմատական խնդիրը, ներդնի ընտանիքի պլանավորման հիմնախնդրով զբաղվող պաշտոնյաների համար գենդերային զգայության պարտադիր դասընթացներ և մշակի հասարակության իրազեկման քարոզարշավներ:

10. Կոմիտեն անհանգստացած է այն խտրականությամբ և բռնությամբ, որից տառապում են լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձիք և մերժում է նրանց մարդու իրավունքների ցանկացած ոտնահարում նրանց սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիման վրա (հոդվածներ. 3, 6, 7 26):

Պետությունը պետք է հստակ և պաշտոնապես հաստատի, որ այն չի հանդուրժում նույնասեռականության, բիսեքսուալության կամ տրանսեքսուալության որևէ սոցիալական խարանում, մարդկանց նկատմամբ ոտնձգություն, խտրականություն կամ բռնություն նրանց սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության պատճառով: Պետությունը պետք է արգելի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականությունը և ապահովի արդյունավետ պաշտպանություն ԼԳԲՏ անձանց համար:

11. Կոմիտեն մտահոգված է, որ 2008 թ. մարտին արտակարգ դրություն հայտարարելու պայմանները հստակ չեն: Կոմիտեն անհանգստացած է, որ արտակարգ դրության ներկա կարգավորումները չեն երաշխավորում Դաշնագրի 4-րդ հոդվածով պաշտպանվող բոլոր իրավունքների ապահովումը (հոդված 4):

Պետությունը պետք է ապահովի, որ արտակարգ դրության վերաբերյալ օրենսդրությունը և կարգավորումները լիովին համապատասխանեն Դաշնագրի 4-րդ հոդվածին:

12. Կոմիտեն անհանգստացած է 2008 թ. մարտի 1-ին ոստիկանության կողմից ուժի գերազանցման առնչությամբ տիրող շարունակական անպատժելիությամբ՝ չնայած մահվան դեպքերը քննելու ջանքերին (հոդվածներ 6, 7, 14):

Պետությունը պետք է արդյունավետ հետաքննական գործընթաց հիմնի՝ ապահովելու, որ 2008 թ. մարտի 1-ին ուժի գերազանցման համար պատասխանատու իրավապահները ներառյալ այդպիսի հրաման արձակելու իրավասություն ունեցողները պատասխանատվության ենթարկվեն և համապատասխան պատժի արժանանան: Պետությունը պետք է նաև երաշխավորի, որ այս գործողությունների զոհերը կստանան համապատասխան փոխհատուցում, և նրանց հասանելի կլինի պատշաճ բժշկական և հոգեբանական վերականգնում:

13. Կոմիտեն անհանգստացած է ուժի գերազանցման դեպքում իրավապահների հաշվետվողականության բացակայությամբ և ոստիկանության կողմից բռնության քննության անկախ մեխանիզմների բացակայությամբ՝ չնայած 2010-2011 թթ. Ոստիկանության բարեփոխումների ծրագրի ընդունմանը (հոդվածներ 6, 7):

Պետությունը պետք է իրականացնի ոստիկանական ուժերի արդյունավետ ընտրություն, վերապատրաստում, ներքին մշտադիտարկում և անկախ հաշվետվողականության մեխանիզմներ՝ ապահովելու մարդու իրավունքների լիարժեք պաշտպանությունը: Այն պետք է ապահովի օրենսդրության և կարգավորումների լիարժեք համապատասխանություն կյանքի իրավունքի պահանջներին, մասնավորապես այնպես ինչպես ամրագրված է ՄԱԿ-ի Իրավապահ մարմինների կողմից ուժի և զենքի կիրառման հիմնական սկզբունքներում: Ինչպես նաև պետությունը պետք է երաշխավորի, իրավապահների կողմից իրականացված բոլոր բռնությունների քննությունը և պատիժը:

14. Կոմիտեն մտահոգված է ազատազրկման վայրերում ենթադրվող խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի իրապես անկախ բողոքարկման մեխանիզմների բացակայությամբ, ինչպես նաև նմանատիպ դեպքերի առնչությամբ դատական կարգով հետապնդումների ցածր թվաքանակով (հոդվածներ 7, 14):

Պետությունը պետք է հիմնի խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի վերաբերյալ բողոքների ընդունման և քննման անկախ համակարգ բոլոր ազատազրկման վայրերում և պետք է ապահովի, որ խոշտանգման, դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի ցանկացած դրսևորում քննվի և պատժվի հանցանքի ծանրությանը համաչափ:

15. Կոմիտեն անհանգստացած է ՀՀ զինված ուժերում ոչ մարտական պայմաններում կասկածելի մահերի և վկայակոչված դեդովշինայի, զինծառայողների նկատմամբ ծառայակիցների և սպաների կողմից վատ վերաբերմունքի առնչությամբ (հոդվածներ.6, 7) :

Պետությունը պետք է երաշխավորի դեդովշինայի և այլ վատ վերաբերմունքի վերացումը զինված ուժերից: Պետությունը պետք է ապահովի դեդովշինայի և ոչ մարտական պայմաններում մահվան դեպքերի և մեղավորների դատական կարգով հետապնդումն ու պատիժը, և տուժողների փոխհատուցումն ու վերականգնումը ներառյալ համապատասխան բժշկական և հոգեբանական օգնության միջոցով:

16. Կոմիտեն անհանգստացած է, որ չկան մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ վիճակագրական տվյալներ և փաստեր՝ գնահատելու երևույթի շրջանակը և ներկայումս իրականացվող ծրագրերի և ռազմավարությունների արդյունավետությունը (հոդված 8):

Պետությունը պետք է պաշտոնական տվյալների բազա ստեղծի մարդկանց թրաֆիքինգի դեպքերի թվի, դրանց բնույթի, դատական իշխանությունների կողմից դրանց նկատմամբ վերաբերմունքի և զոհերին տրամադրված փոխհատուցման վերաբերյալ: Պետությունը նաև պետք է ստեղծի մշտադիտարկման համակարգ՝ գնահատելու մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և պատժման համար ընդունված միջոցների և ռազմավարությունների արդյունքները:

17. Հանձնաժողովը մտահոգված է ապաստան փնտրողների իրավիճակով, որոնք դատական կարգով հետապնդվում և դատապարտվում են Քրեական օրենսգրքի 329 հոդվածի համաձայն միայն իրենց անօրինական մուտքի համար, թեև իրենք իրենց ճանաչում են իբրև ապաստան փնտրող (հոդվածներ 9, 13):

Պետությունը պետք է ապահովի, որ ապաստան փնտրող ոչ մի անհատ չենթարկվի պատժի միմիայն անօրինական մուտքի կամ բնակության պատճառով, առանց հաշվի առնելու նրա՝ միջազգային պաշտպանության կարիքը:

18. Կոմիտեն անհանգստացած է Լեռնային Ղարաբաղի հակամարտության պատճառով 1988-1992 թթ. Ադրբեջանից Հայաստան գաղթած փախստականների և նրանց ընտանիքների, ինչպես նաև ներքին տեղահանվածների չկարգավորված իրավիճակով, որոնք այժմ ապրում են հանրակացարաններում, ծայրահեղ բարդ պայմաններում, ինչը վնասակար ազդեցություն է ունենում նրանց ֆիզիկական և հոգեկան առողջության վրա (հոդվածներ 12, 17):

Պետությունը պետք է ձեռնարկի Ադրբեջանից Հայաստան ներգաղթածների իրավունքների և արտոնությունների վերաբերյալ իրազեկման քարոզարշավներ, ներառյալ գործող պարզեցված հպատակագրման սխեմայի վերաբերյալ և մեծացնի իր ջանքերը փախստականների և ներքին տեղահանվածների կենսապայմանների բարելավման նպատակով, հատկապես բնակարանային և կենցաղային պայմանների առումով:

19. Կոմիտեն մտահոգված է նախադատաքննական կալանքի հաճախակի կիրառմամբ, և որ կալանավորները լիովին տեղյակ չեն իրենց հիմնարար իրավունքների մասին իրենց ազատազրկման սկզբից: Կոմիտեն նաև ցավում է, որ կալանավորները հաճախակի զրկված են փաստաբանի և բժիշկի ժամանակին դիմելու հնարավորությունից, իրենց ընտրությամբ որևէ մեկին տեղեկացնելու իրավունքից, և որ նրանք ժամանակին չեն ներկայացվում դատավորին (հոդված 9):

Համաձայն 2002 թ. Ձերբակալվածների պահման և բանտարկյալների ազատման մասին օրենքի՝ պետությունը պետք է ապահովի, որ բոլոր ազատազրկվածները և՛ բանավոր, և՛ գրավոր կերպով տեղեկացված լինեն իրենց հիմնարար իրավունքների վերաբերյալ ազատազրկման սկզբից, այն մասին, որ նրանք ունեն փաստաբանի և բժշկի դիմելու իրավունք, և որ իրենց ընտրությամբ կարող են տեղեկացնել որևէ մեկին: Պետությունը պետք է նաև երաշխավորի, որ բոլոր ազատազրկվածները արագորեն ներկայացվեն դատավորին համաձայն Դաշնագրի դրույթների:

20. Կոմիտեն անհանգստացած է բանտերի գերբնակեցմամբ և անձնակազմի սակավությամբ: Կոմիտեն նաև ցավում է դատարանի կողմից կալանքի այլընտրանքների կիրառման սակավությամբ (հոդված 10):

Պետությունը պետք է շարունակի ջանքեր գործադրել՝ բարելավելու կալանավայրերի պայմանները և նվազեցնելու բանտերի գերբնակեցումը, ներառյալ բանտարկման այլընտրանքային միջոցների կիրառումը:

21. Կոմիտեն մտահոգված է դատական իշխանությունների անկախության պակասությամբ: Մասնավորապես, կոմիտեն անհանգստացած է դատավորների նշանակման մեխանիզմով, որը նրանց դարձնում է խոցելի քաղաքական ճնշումների համար, ինչպես նաև անկախ կարգապահական համակարգի բացակայությամբ (հոդված 14) :

Պետությունը պետք է բարելավի ազգային օրենսդրությունը, որպեսզի ապահովի դատական իշխանության անկախությունը գործադիր և օրենսդիր իշխանություններից, ի լրումն դատավորների կոլեգիալ կորպուսի՝ հիմնելով անկախ մարմին, որը պատասխանատու կլինի դատավորների նշանակման և առաջխաղացման, ինչպես նաև կարգապահական կարգավորումների կիրառման համար:

22. Կոմիտեն անհանգստացած է պետական կառույցների բոլոր ճյուղերում առկա մշտական կոռուպցիայի վերաբերյալ մեղադրանքներով, հատկապես ոստիկանությունում և դատական համակարգում, որը քայքայում է օրենքի գերակայությունը: Ի հավելումն դրա, կոմիտեն մտահոգված է վերին մակարադակում կոռուպցիայի դեմ պայքարի համոզիչ արդյունքների

սակավությամբ և արդյունքում արդարադատության իրականացման նկատմամբ հանրային ցածր վստահությամբ (հոդված 14):

Պետությունը պետք է մեծացնի իշխանության բոլոր ճյուղերում կոռուպցիայի դեմ պայքարի ջանքերը՝ կոռուպցիայի վերաբերյալ բոլոր մեղադրանքները հրատապ և լիարժեք քննելու և պատասխանատուներին պատժի ենթարկելու միջոցով:

23. Կոմիտեն անհանգստացած է անչափասների արդարադատության համակարգի սահմանափակումներով, մասնավորապես մասնագիտացված դատավորների թվի սակավությամբ և հատուկ օրենքների, ընթացակարգերի ու դատական սենյակների վերաբերյալ տեղեկատվության բացակայությամբ: Կոմիտեն նաև մտահոգված է անչափահաս օրինազանցների ֆիզիկական և հոգեբանական վերականգնման և սոցիալական վերաինտեգրման պայմանների բացակայությամբ (հոդված 14 և 24):

Պետությունը պետք է ջանա երաշխավորել, որ անչափահասների արդարադատության համակարգը ունենա անհրաժեշտ նյութական և մարդկային ռեսուրսներ: Այս տեսանկյունից պետությունը պետք է ապահովի, որ անչափահասների արդարադատության համակարգում ներգրավված բոլոր մասնագետներն ուսուցանվեն համապատասխան միջազգային չափանիշների, ներառյալ՝ հանցագործության մանկահասակ զոհերի և վկաների մասնակցությամբ դեպքերում արդարադատության ՄԱԿ-ի ուղեցույցը (Տնտեսական և սոցիալական խորհրդի բանաձև 2005/20): Պետությունը պետք է նաև հատուկ կառույցներ ստեղծի անչափահաս օրինազանցների ֆիզիկական և հոգեբանական վերականգնման և սոցիալական վերաինտեգրման համար:

24. Կոմիտեն մտահոգված է կրոնի և հավատքի նկատմամբ գոյություն ունեցող սահմանափակումներով, ներառյալ հոգեորսության քրեականացումը (հոդված 18):

Պետությունը պետք է բարելավի իր օրենսդրությունը դաշնագրի 18-րդ հոդվածի պահանջներին համապատասխան, ներառյալ հոգեորսության ապաքրեականացումը:

25. Կոմիտեն մտահոգված է, որ 2004 և 2006 թթ. փոփոխված Այլընտրանքային ծառայության օրենքը կրոնական պատճառներով ծառայությունից հրաժարվող անձանց համար դեռևս չի ապահովում քաղաքացիական բնույթի իրական այլընտրանքային ծառայություն: Կոմիտեն նաև մտահոգված է, որ կրոնական պատճառներով ծառայությունից հրաժարվողները՝ մեծամասամբ Եհովայի վկաները, դեռևս շարունակում են բանտարկվել, երբ հրաժարվում են զինվորական ծառայությունից և գոյություն ունեցող այլընտրանքային զինվորական ծառայությունից (հոդված 18, 26):

Պետությունը պետք է ստեղծի իրական ալտերնատիվ զինվորական ծառայությանը, որը իրապես կլինի ոչ ռազմական, հասանելի դավանական նկատառումներով զինվորական ծառայությունից հրաժարվողներին, ոչ պատժիչ, և ոչ խտրական իր բնույթով, արժեքով և տևողությամբ: Պետությունը պետք է նաև ազատ արձակի բոլոր դավանական նկատառումներով զինվորական կամ այլընտրանքային ծառայությունից հրաժարվողներին:

26. Կոմիտեն մտահոգած է լրագրողների և իրավապաշտպանների նկատմամբ սպառնալիքների և հարձակումների մասին ստացված տեղեկատվությամբ (հոդված 19):

Պետությունը պետք է ապահովի լրագրողների և իիրավապաշտպանների պաշտպանությունը սպառնալիքներից և հարձակումներից, նման գործողությունների վերաբերյալ բոլոր մեղադրանքների արագ և ամբողջական քննությունն, մեղավորների դատական կարգով հետապնդումն ու պատիժը, ինչպես նաև զոհերի փոխհատուցման հասանելիությունը:

27. Պետությունը պետք է լայնորեն տարածի դաշնագիրը, երկրորդ պարբերական զեկույցի տեքստը, կոմիտեի կողմից ներկայացված հարցերի ցանկի գրավոր պատասխանները և ներկայացնի եզրակացությունները՝ բարձրացնելու դատական, օրենսդիր և վարչական իշխանությունների, քաղաքացիական հասարակության և երկրում գործող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև ընդհանուր հասարակության իրազեկությունը: Կոմիտեն նաև առաջարկում է, որ զեկույցը և եզրակացությունները թարգմանվեն պետության պաշտոնական լեզուներով: Կոմիտեն նաև պահանջում է պետությունից լայնորեն խորհրդակցել քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների հետ 4-րդ պարբերական զեկույցը պատրաստելիս:

28. Կոմիտեի ընթացակարգերի 5-րդ պարբերության 71-րդ կանոնի համաձայն պետությունը պետք է մեկ տարվա ընթացքում համապատասխան տեղեկատվություն տրամադրի սույն եզրակացությունների 12-րդ, 14-րդ և 21-րդ պարբերություններում նշված առաջարկությունների իրականացման վերաբերյալ:

29. Կոմիտեն պահանջում է պետությունից առաջարկությունների և դաշնագրին ընդհանուր առմամբ հետևելու վերաբերյալ կոնկրետ և թարմ տեղեկատվություն ներկայացնել մինչև 2016 թ. հուլիսի 27-ը ներկայացվող հաջորդ պարբերական զեկույցում: